ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «02» 10 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Բունիաթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 3-ին կնքված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1082-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրի թիվ 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում 2-րդ չափաբաժնի մասով սահմանել ծառայության մատուցման նոր ժամկետ՝ «**01.11.2018 թ.**» բառերը փոխարինելով «**15.12.2019 թ.**» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 90001101 ՀՎՀՀ 02698732	«Սեյսմշին» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 21/3ա էլ. հասցե՝ info@seismshin.am Հեռ.՝ (060) 651 800, (041) 188 180 Հ/Հ 163048109645 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ ՀՎՀՀ 04227903
Գլխավոր քարտուղար _____ Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն _____ Ն. Բունիաթյան (ստորագրություն) Կ.Տ